



2020

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ANNUAL REPORT

 **AraratBank**

1. Ընդհանուր ակտիվները մեկ տարվա ընթացքում աճել են 11.9%-ով և կազմել 248,881 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 14.7%:
2. Ընդհանուր պարտավորությունները 2019թ.-ի համեմատ աճել են 13.8%-ով և կազմել 210,655 մլն ՀՀ դրամ, իսկ 2010թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 14.9%:
3. Հաճախորդներին տրված վարկերը հաշվետու տարում աճել են 9.0%-ով և կազմել 148,222 մլն ՀՀ դրամ, իսկ միջին աճի տեմպը վերջին տասը տարիների համար կազմել է 14.9%:
4. Արժեթղթերում ներդրումները աճել են 8.0%-ով և կազմել 41,567 մլն ՀՀ դրամ: 2010թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 23.4%:

5. Բանկի կողմից ներգրավված ժամկետային ավանդները աճել են 23.7%-ով և կազմել 48,913 մլն ՀՀ դրամ, իսկ 2010թ.-ից սկսած միջին աճի տեմպը կազմել է 10.0%: Միայն ֆիզիկական անձանց միջոցները մեկ տարում աճել են 21.2%-ով:

6. Բանկի զուտ տոկոսային մարժան աճել է 0.5 տոկոսային կետով և կազմել 3.6%:

7. Բանկի զուտ շահույթը կազմել է 1,341 մլն ՀՀ դրամ:

8. Բանկի ընդհանուր կապիտալի վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 14.1%:

9. Բանկը սեպտեմբեր ամսին մեկնարկել է իր վերաբրենդավորման գործընթացը:

10. 2020 թվականի վերջին Բանկն ունեցել է թվով 56 մասնաճյուղ:

Հարգելիներս,

Հաշվետու տարում մենք համարձակ քայլերով գնացել ենք նորարար գաղափարների հետևից: Ժամանակի հրամայականն էր անցնել հաճախորդների հեռավար սպասարկման և շարունակել արագ կատարելագործել համակարգը՝ առավելապես թվային տեխնոլոգիաների և բանկային ծառայությունների մատուցման որակի բարձրացման առումով: Անցած տարում հաջողությամբ մեկնարկեցինք Բանկի վերաբրենդավորման գործընթացը, որն իր դասական նշանակությունից զատ մեզ համար դարձավ գաղափարական հենք և հաճախորդակենտրոն մոտեցման ուղենիշ, յուրահատուկ կորպորատիվ մշակույթի ձևավորման մեկնարկ: Իրագործեցինք անձնակազմի ուսուցման ծրագրեր, մշակեցինք իրավիճակին համահունչ ռազմավարություն: Կարևորելով յուրաքանչյուր աշխատակցի առողջությունը՝ քայլեր ձեռնարկվեցին համալիր ապահովագրության համակարգի ներդրման և աշխատակիցների առողջ ապրելակերպին ուղղված ֆինանսական աջակցության ծրագրի իրագործման ուղղությամբ:

Տարվա ընթացքում կարողացանք պահպանել կայունություն և ցուցանիշների աճ ինչպես վարկավորման, այնպես էլ ներգրավումների առումով: Ցանկանում եմ առանձնահատուկ շեշտել միջազգային մեր գործընկերների ցուցաբերած բարձր վստահությունը, ինչը ևս մեկ անգամ գալիս է փաստելու ԱրարատԲանկի՝ տարածաշրջանում հուսալի հենարան լինելու փաստը:

Սակայն այս տարվա խոսքս սոսկ վիճակագրություն և նվաճումների արձանագրում չէ: Հաշվետու տարվա իմ ուղերձն առավելապես ոչ կանխատեսելի մարտահրավերներին միասնաբար դիմագրավելու մասին է: ԱրարատԲանկի ողջ թիմը, իր յուրաքանչյուր հաճախորդի հետ, որպես մեծ և համերաշխ ընտանիք, հաղթահարեց և շարունակում է հաղթահարել COVID-19-ի հետևանքները: Իր անդառնալի հետևանքներով մեզ բոլորիս պատուհասած պատերազմի առումով առանձնակի հպարտ ենք մեր բոլոր աշխատակիցներով, որոնք մասնակցեցին ու պայքարեցին հանուն բոլորիս Հայրենիքի: Ցանկանում եմ ընդգծել, որ հնարավոր բոլոր տարբերակներով Բանկը վարկային պարտավորությունների գիշումների մասով եղել և մնում է ինչպես պատերազմին մասնակցած մեր հաճախորդների, այնպես էլ նրանց ընտանիքների կողքին: Առավել քան վստահ եմ, որ կարողացել ենք մեր առջև ծառացած յուրաքանչյուր խնդրի դեպքում հավատարիմ մնալ մեր որդեգրած գլխավոր սկզբունքին՝ կենտրոնում հաճախորդն է: Շնորհակալ եմ բոլորին, ովքեր իրենց լուծման են ներդրել մեր ֆինանսական կայունության գործում: Վստահ եմ՝ մեր համատեղ ջանքերով վաղն ապրելու, արարելու և բարձրանալու ենք անառիկ և ավելի ուժեղ Հայաստանում:





Հարգելի բաժնետերեր, հաճախորդներ և գործընկերներ, 2020թ.-ը մարտահրավերներով լի տարի էր. Covid-19 համաճարակ, արցախյան պատերազմ, դրանց հաջողած տնտեսական, քաղաքական և հետպատերազմյան ճգնաժամեր: Թվում էր, թե ստեղծվել են բոլոր պայմանները ծախողելու համար, սակայն ՀՀ բանկային համակարգը ապացուցեց, որ բավականին կուռ ու կայուն է և ունակ է դիմակայելու ծառացած մարտահրավերներին: ԱրարատԲանկը, խստագույնս առաջնորդվելով ճգնաժամի կառավարման և արտակարգ իրավիճակներում Բիզնեսի անընդհատության ապահովման ռազմավարությամբ, կարողացավ շատ արագ ադապտացվել նոր միջավայրին և ապահովել համապատասխան բանկային ծառայությունների թվայնացումն ու մատուցումը Covid-19 համաճարակի պայմաններում: Արդյունքում, 2020թ.-ին Բանկը հաջողությամբ կատարեց իր առջև դրված ցուցանիշները, ապահովեց իր ակտիվ մասնակցությունը Կառավարության կողմից իրականացված Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին օժանդակելու միջոցառումների ծրագրերին, ինչպես նաև ներեց մարտական գործողությունների հետևանքով զոհված, անհետ կորած կամ հաշմանդամություն ձեռք բերած անձանց վարկային պարտավորությունները:

Բանկի համար տարին նշանավորվեց վերաբերենդավորման մեկնարկով՝ ձեռնամուխ լինելով մի գործընթացի, որը կհանգեցնի ժամանակակից ծառայությունների մատուցման, առաջադեմ թվային տեխնոլոգիաների ու սպասարկման նոր մոտեցումների կիրառման, կամրապնդի Բանկի դիրքերը և կապելացնի վերջինիս մասնաբաժինը շուկայում: Բանկը կարողացավ իր դիրքերը բարելավել թե՛ թվային ու ներդրումային, թե՛ ավանդական բանկային ծառայությունների մատուցման շուկաներում: Հաշվի առնելով, որ Բանկի մասնաճյուղային ցանցը բավականին մեծ է, որոշում է կայացվել մասնաճյուղերի վերաբերենդավորման գործընթացն իրականացնել փուլային եղանակով:

Հաշվետու տարում Բանկի վարկային ներդրումները աճել են շուրջ 9 տոկոսով: Աճը գրանցվել է մասնավորապես առավել եկամտաբեր մանրածախ վարկերի 21.1 տոկոս աճի հաշվին, ինչը իր դրական ազդեցությունն է ունեցել Բանկի եկամտաբերության ցուցանիշների վրա: 2020 թվականի ընթացքում Բանկի ընդհանուր վարկերում 30 օր և ավել ժամկետանց վարկերի տեսակարար կշիռը կազմել է մոտ 4.81 տոկոս, ինչը գալիս է ևս մեկ անգամ ապացուցելու, որ ստեղծված ճգնաժամային իրավիճակներում Բանկը կարողացել է ճիշտ կառավարել ռիսկերն ու խուսափել վարկային պորտֆելի որակի կտրուկ վատթարացումներից: Չնայած նրան, որ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրության ժամանակ ժամկետային ավանդները դրսևորեցին որոշակի անկայունություն՝ Բանկին հաջողվեց 2020թ.-ի ընթացքում ապահովել ավանդների աննախադեպ աճ 9,4մլրդ ՀՀ դրամի չափով:

Անդրադառնալով միջազգային ֆինանսական կառույցներին՝ պետք է փաստեմ, որ, չնայած 2020թ.-ը բավականին ծանր և անբարենպաստ տարի էր, Բանկը նոր պայմանագրեր է կնքել Նիդերլանդների «Triodos Investment Management», «Microfinance Enhancement Facility» և «Blue Orchard»-ի՝ Զարգացող և սահմանային շուկաներում Covid-19 պայմաններում ՄՓՄՁ-ների աջակցման հիմնադրամի հետ՝ հնարավորություն տալով միկրո, փոքր և միջին ձեռնարկություններին շարունակել կամ վերսկսել իրենց գործունեությունը համավարակի պայմաններում՝ միաժամանակ ստեղծելով աշխատատեղեր և զարկ տալով տնտեսությանը:

Ամփոփելով, պետք է նշեմ, որ մենք գիտակցում ենք, որ առաջիկա տարիներին գործելու ենք ավելի ու ավելի մեծացող մրցակցության, նոր մարտահրավերների պայմաններում, որոնք առաջադրում են նոր պահանջներ Բանկի գործունեության նկատմամբ: Սակայն մեր առաջիկա ծրագրերը ևս հավակնոտ են, և մենք պետք է պահպանենք առաջատար ֆինանսական կազմակերպությանը բնորոշ գործելակերպը: Ես վստահ եմ, որ հավասարակշռված ռազմավարության, մեր հաճախորդների և գործընկերների հետ երկարաժամկետ փոխշահավետ համագործակցության հիման վրա մենք կարձանագրենք նորանոր հաջողություններ՝ ի բարօրություն մեզ բոլորիս:

02.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն «Մուլտի Գոլդ» ոսկերչական կենտրոնի տարածքում բացեց Կոտայք մասնաճյուղը:

02.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն «Entrepreneurial Development Bank»-ից (FMO) 10 մլն ԱՄՆ դոլարի վարկ է ներգրավել՝ ՓՄՁ ոլորտի զարգացման և էներգախնայող կամ, այսպես կոչված, «կանաչ» բիզնես ծրագրերի վարկավորման նպատակով:

02.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն Ria Money Transfer համակարգի կողմից արժանացել է «Տարվա գործընկեր» մրցանակի՝ 2020թ.-ին գերազանց արդյունքներ գրանցելու և Ria Money Transfer համակարգի բիզնեսի աճին խթանելու համար:

02.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն «AMX մրցանակաբաշխություն 2020»-ին լավագույնն է ճանաչվել միանգամից չորս անվանակարգում՝ «Կորպորատիվ արժեթղթերի շուկայում բորսայի անդամ 2020», «Պետական պարտատոմսերի շուկայում բորսայի անդամ 2020», «AMX բորսայի անդամ» գեր-անվանակարգ (AMX Grand Prix) և «Կարգավորվող շուկայի հաշվարկային համակարգի անդամ 2020»:

02.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում ներդրվեց «ԱՐԱՐԱՏ - ԿՈՄՖՈՐՏ» նոր 3 տարեկան ավանդատեսակը:

04.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, SWIFT փոխանցումների բարձր որակ ապահովելու համար, արժանացել է ավստրիական «Raiffeisen Bank International AG»-ի (RBI) «Որակի գերազանցություն» (STP Quality Award) մրցանակին

09.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն մեկնարկեց իր վերաբրենդավորման նոր գործընթացը:

12.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի և «Triodos Fair Share Fund» (TFSF) և «Triodos Microfinance Fund» (TMF) ներդրումային հիմնադրամների միջև կնքվեց 3 մլն եվրոյի երկկողմ վարկային պայմանագիր՝ Հայաստանում տեղական բիզնեսներին հետագայում աջակցություն ցուցաբերելու համար:


12.2020 | ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն 5 մլն ԱՄՆ դոլար է ներգրավել «Incofin IM»-ի կողմից երաշխավորված Microfinance Enhancement Facility (MEF) ընկերությունից՝ ՓՄՁ ոլորտը խթանելու նպատակով:

Մարտահրավերներով և դժվարություններով լի 2020 թվականը ծանր էր ինչպես համաշխարհային, այնպես էլ Հայաստանի տնտեսության համար: Այնուամենայնիվ, բանկային համակարգը դրսևորեց համեմատաբար բարձր կայունություն և կարողացավ դիմակայել հաշվետու տարվա մարտահրավերներին:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿԸ ևս հաջողեց հաշվետու տարում՝ ապահովելով բյուջետային ցուցանիշների կատարումը:


2020թ.-ի տարեկան արդյունքներով Բանկի ակտիվները կազմել են 248,881 մլն ՀՀ դրամ: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշն աճել է 11.9%-ով կամ 26.4 մլն ՀՀ դրամով: Բանկի ակտիվների վերջին տասը տարիների միջին աճի տեմպը կազմել է 14.7%:

Ընդհանուր ակտիվներ, մլն ՀՀ դրամ



Ընդհանուր ակտիվներում եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը կազմել է **82.02%**:

31.12.2020



Հաճախորդներին տրված վարկեր

Ներդրումային արժեթղթեր

Դրամական միջոցներ


Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

Այլ ակտիվներ

Գույք

31.12.2019




ԵԿԱՄՏԱԲԵՐ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2020Թ. ԵՎ 2019Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ



(ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)


	2020	2019	Փոփոխություն	%
Ակտիվներ, այդ թվում՝	248,881	222,446	26,435	11.88%
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	204,130	185,144	18,987	10.25%
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվածություններ	148,222	135,921	12,301	9.05%
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների	14,341	10,748	3,594	33.44%
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	21,858	38,475	-16,617	-43.19%
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	5,848		5,848	
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	8,668		8,668	
Ամորտիզացված արժեքով չափվող հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	5,193		5,193	
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	82.02%	83.23%		

31.12.2020



- Հաճախորդներին տրված վարկեր
- Ներդրումային արժեթղթեր
- Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

31.12.2019



Չնայած այն հանգամանքին, որ հաճախորդներին տրված վարկերը և ներդրումային արժեթղթերը աճել են՝ նախորդ տարվա համեմատ եկամտաբեր ակտիվներում դրանց տեսակարար կշիռները նվազել են՝ ի հաշիվ բանկերի ու այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների առաջանցիկ աճի:


2020թ.-ի ընթացքում ֆինանսական համակարգը բախվեց ոչ միայն միջոցների ներգրավման ու դրանց պահպանման խոչընդոտներին, այլ նաև տեղաբաշխված միջոցների արդյունավետության, մարումների ու պորտֆելի որակի վատթարացման խնդիրներին: Այնուամենայնիվ, Բանկը կարողացավ հաջողությամբ դիմակայել վերոնշյալ խնդիրներին և ապահովեց պորտֆելի աճ նախանշված ուղղություններով: Մասնավորապես՝ 2020թ.-ի ընթացքում իրականացվել են ներքոնշյալ գործողությունները.

- Ակտիվ մասնակցություն ունենալով կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերին՝ կորոնավիրուսից տուժած շուրջ 125 շահառուի տրամադրվել է սուբսիդավորման ենթակա վարկային միջոցներ:

- Վերանայվել են վարկավորման գործընթացը կարգավորող մի շարք ներքին իրավական ակտեր: Արդյունքում, հաճախորդի կողմից վարկավորման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացումը, պահպանումը և Բանկի տարբեր ստորաբաժանումներին տրամադրումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով, ինչը հնարավորություն է ստեղծել վարկավորման ամբողջ գործընթացը դարձնել առավել ճկուն, արագ և արդյունավետ:

- Վերանայվել են հիփոթեքային վարկերի տրամադրման պայմանները. մասնավորապես, Բանկի ռեսուրսով աշխատակիցներին տրամադրվող հիփոթեքային վարկերի, ինչպես նաև ավտոմեքենայի գրավադրմամբ վարկերի և օվերդրաֆտների տրամադրման պայմանները:


- Իրականացվել են էլեկտրոնային «Սքորինգ» համակարգի բարելավմանն ուղղված աշխատանքներ:
 - Ներդրվել են առաջնային շուկայից անմիջապես կառուցապատողից բնակարանների ձեռքբերման նոր նախագծեր՝ տարբեր կառուցապատողների հետ:
 - Վերագործարկվել է էլեկտրոնային «Սքորինգ» համակարգի միջոցով վարկային պրոդուկտների տրամադրումը:
- ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրության հետևանքով հաճախորդներին տրամադրվել է վարկային արձակուրդ՝ հնարավորություն ընձեռելով հետաձգել վարկերի և օվերդրաֆտների մայր գումարի և տոկոսագումարի մարումները: Արձակուրդի ավարտից հետո իրականացվել է կուտակված պարտավորությունների վերաբաշխում և վարկերի վերակառուցումներ:



Ի լրումն վերոշարադրյալի՝ 2020 թվականի ընթացքում ապահովվել է հաճախորդներին տրված վարկերի ծավալների բնականոն աճ և տարեվերջի դրությամբ մնացորդը կազմել է 148,222 մլն ՀՀ դրամ: 2019թ.-ի համեմատ ցուցանիշի աճը կազմել է 9.0% կամ 12,301 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 19.4%:


2020 թվականին Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր ակտիվների 59.6%-ը՝ նախորդ տարվա 61.1%-ի դիմաց: Ցուցանիշների նման փոփոխությունը պայմանավորված է ակտիվներում բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների կշիռի ավելացմամբ:

Հաճախորդներին տրված վարկեր, մլն ՀՀ դրամ




Բանկի կողմից տրամադրված վարկերում հիփոթեքային վարկերի ծավալը՝ 2020թ.-ի տարեվերջի դրությամբ կազմել է 21,239 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 19,582 մլն ՀՀ դրամի դիմաց. աճը՝ 8.5%: Բանկի կողմից տրամադրված սպառողական վարկերը 2019թ.-ի համեմատ աճել են մոտ 9,283 մլն ՀՀ դրամով կամ 28.7%-ով և 2020թ. -ի վերջի դրությամբ կազմել են 41,674 մլն ՀՀ դրամ: 2020 թվականին 2019թ.-ի համեմատ աճել են նաև գյուղատնտեսության, շինարարության և արդյունաբերության ճյուղերին տրամադրված վարկերը, համապատասխանաբար՝ 11.2%, 22.1% և 1.7%-ով: Առևտրի վարկավորման ծավալները հաշվետու տարվա ավարտին կազմել են 28.4 մլրդ դրամ՝ նվազելով 2.1%-ով:

Տրամադրված վարկերի եւ
փոխառվությունների վերլուծությունն ըստ
տնտեսության ոլորտների 31.12.2020




Տրամադրված վարկերի եւ
փոխառվությունների վերլուծությունն ըստ
տնտեսության ոլորտների 31.12.2019




2020թ.-ի վերջի դրությամբ ընդհանուր վարկային պորտֆելում ավելացել է ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռն, ինչը դիտարկվում էր որպես Բանկի ռազմավարական առաջնահերթություններից մեկը: Տարեվերջին ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տեսակարար կշիռը կազմել է 42.4%՝ նախորդ տարվա 38.2%-ի դիմաց:

Տրամադրված վարկերի եւ փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների 31.12.2020




Տրամադրված վարկերի եւ փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների 31.12.2019





2020 թվականի ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ն իր ներդրումային քաղաքականության շրջանակներում շարունակեց իրականացնել ակտիվ գործունեություն արժեթղթերի շուկայում ապահովելով համապատասխան ցուցանիշների շարունակական աճ:

2020 թվականի վերջի դրությամբ Բանկի ներդրումային արժեթղթերի պորտֆելը կազմել է 41,567 մլն ՀՀ դրամ, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 23.4%:

Ներդրումային արժեթղթեր, մլն ՀՀ դրամ




Ներդրումային արժեթղթերի պորտֆելում ՀՀ պետական պարտատոմսերը կազմել են 61.9%՝ 2019թ.-ի 61.1%-ի դիմաց, ոչ պետական պարտատոմսերը կազմել են 37.9%՝ նախորդ տարվա 38.7%-ի դիմաց: Բանկի արժեթղթերի պորտֆելի կազմն ու կառուցվածքը ներկայացված է ստորև:



2020թ.-ի ավարտին Բանկի պարտավորությունները կազմել են 210,655 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.8%-ով կամ 25.6 մլրդ ՀՀ դրամով:

Ընդհանուր պարտավորություններ, մլն ՀՀ դրամ




Նախորդ տարվա համեմատ պարտավորությունների աճը հիմնականում պայմանավորված է բանկերի նկատմամբ պարտավորությունների, ժամկետային ավանդների և ցպահանջ միջոցների ավելացմամբ:


ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՖԻՆ. ԿԱԶՄ. ՆԵՐԳՐԱՎՈՒՄՆԵՐ (ՄԼՆ ՀՀ ԴՐԱՄ)

Տարեվերջին Բանկի կողմից միջազգային և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված փոխառությունները կազմել են 67,644 մլն ՀՀ դրամ կամ պարտավորությունների 32.1%-ը: Ցուցանիշը 2019թթ-ի համեմատ նվազել է 2.5%-ով: Վերոնշյալը համահունչ է Բանկի կողմից որդեգրած միջոցների կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարությանը, որի շրջանակներում՝ անկախ հաշվետու տարում միջազգային ներգրավումներ իրականացնելու ընթացքում առաջ եկած խոչընդոտների և խստացված պահանջների, Բանկը շարունակել է ակտիվորեն համագործակել մի շարք միջազգային կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Նիդերլանդների զարգացման ֆինանսական ընկերությունը (FMO), DEUTSCHE INVESTITIONS UND ENTWICKLUNGSGESELLSCHAFT MBH ներդրումային կազմակերպությունը (DEG), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (EBRD), Համաշխարհային բանկը (WB), Սևծովյան առևտրի և զարգացման բանկը (BSTDB), Հարավ-արևելյան Եվրոպայի եվրոպական հիմնադրամը (EFSE), Գերմանահայկական հիմնադրամը (KfW), Incofin Investment Management բելգիական ընկերությունը, responsibility Global Microfinance Fund հիմնադրամը, Blue Orchard ընկերությունը, Եվրասիական զարգացման բանկը (EDB), SYMBIOTICS SICAV ընկերությունը և այլ միջազգային ֆինանսական կառույցներ:

Միջազգային և այլ ֆին. կազմ. ներգրավումներ, մլն ՀՀ դրամ




31.12.2020




- Միջազգային և այլ ֆին. կազմ. ստացված միջոցներ
- Ընթացիկ հաշիվներ և ցպահանջ միջոցներ
- Ժամկետային ավանդներ
- Պարտավորություններ բանկերի նկատմամբ
- Բանկի կողմից թողարկված արժեթղթեր
- Այլ պարտավորություններ
- Ստորադաս փոխառություն

31.12.2019




Ժամկետային ավանդները հաշվետու տարվա ավարտին կազմել են 48,913 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 23.2%-ը: 2019թ.-ի համեմատ ցուցանիշը ավելացել է 23.7%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 10.0%: Մեկ տարվա ընթացքում իրավաբանական անձանց ժամկետային ավանդների տեսակարար կշիռը աճել է՝ կազմելով 14.1%, իսկ ֆիզիկական անձանց ավանդներինը կազմել է 85.9%:


Ժամկետային ավանդներ, մլն ՀՀ դրամ



31.12.2020




31.12.2019



2020թ.-ի ընթացքում Բանկի կողմից չեն իրականացվել արժեթղթերի նոր թողարկումներ, իսկ պորտֆելը ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի արժեզրկման արդյունքում կազմել է 15,165 մլն ՀՀ դրամ:


Բանկի ընթացիկ հաշիվներն ու ցպահանջ միջոցները հաշվետու տարվա ավարտին կազմել են 49,023 մլն ՀՀ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների շուրջ 23.3%-ը: 2019թ.-ի համեմատ ցուցանիշը ավելացել է 11.8%-ով, իսկ վերջին տասը տարվա միջին աճի տեմպը կազմել է 6.7%: Իրավաբանական անձանց միջոցների տեսակարար կշիռը կազմել է 54.4%, իսկ ֆիզիկական անձանց ավանդներինը կազմել է 45.6%:

Ընթացիկ հաշիվներ եւ ցպահանջ միջոցներ, մլն ՀՀ դրամ



2020թ.-ի վերջի դրությամբ Բանկի սեփական կապիտալը կազմել է 38,227 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա վերջի համեմատ աճել է 822 մլն ՀՀ դրամով կամ 2.2%-ով: Հաշվետու տարում բաժնետոմսերի լրացուցիչ թողարկում չի իրականացվել, ուստի, ընդհանուր կապիտալի ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորված է 2020թ.-ի տարեկան գործունեության արդյունքում գեներացված 1,341 մլն ՀՀ դրամ զուտ շահույթով:


Ընդհանուր կապիտալ, մլն ՀՀ դրամ



2020թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված կանոնադրական կապիտալը կազմել է 8,803,655 հազար ՀՀ դրամ: Համաձայն Բանկի Կանոնադրության՝ բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 1,760,731 հատ սովորական անվանական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 5,000 դրամ անվանական արժեքով:


2020թ.-ի ընդհանուր կապիտալի աճի արդյունքում մեկ բաժնետոմսի հաշվեկշռային արժեքը կազմել է 21,711 ՀՀ դրամ՝ 2019թ.-ի 21,244 ՀՀ դրամ ցուցանիշի համեմատ աճելով 2.2%-ով:

Բանկի բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի դինամիկան, ՀՀ դրամ



Տոկոսային և նմանատիպ եկամուտները հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 17,554 մլն ՀՀ դրամ ավելանալով 9.05%-ով կամ 1,456 մլն ՀՀ դրամով: Տոկոսային և նմանատիպ եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է հաճախորդներին տրված վարկերի գծով ստացված տոկոսային եկամուտների 1,530 մլն ՀՀ դրամ կամ 12.2% աճով, որը կազմել է ընդհանուր տոկոսային եկամուտների 80.0%-ը՝ նախորդ տարվա 77.8%-ի դիմաց: Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքում Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից ստացված տոկոսային եկամուտների մասնաբաժինը կազմել է 0.7%՝ նախորդ տարվա 1.8%-ի փոխարեն, արդյունքում թերակատարվել է 172 մլն ՀՀ դրամի տոկոսային եկամուտ: Ներդրումային արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 19.9%-ով և կազմել 3,113 մլն ՀՀ դրամ:

Տոկոսային և նմանատիպ եկամուտների կառուցվածքը բերված է ստորև:



Տոկոսային և նմանատիպ ծախսերը հաշվետու տարվա գործունեության արդյունքում կազմել են 9,163 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.04%-ով կամ 3.3 մլն ՀՀ դրամով:

Տոկոսային ծախսերում 2019թ.-ի համեմատ նվազել են բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների գծով ծախսերի տեսակարար կշիռը՝ 59.4%-ի դիմաց կազմելով 51.5%: Արդյունքում ծախսերը կրճատվել են 13.3%-ով՝ կազմելով 4,717 մլն ՀՀ դրամ, որը հիմնականում հաշվեկշռային պորտֆելի նվազման արդյունքն է:


Բանկի հաճախորդների ցպահանջ և ժամկետային ավանդների դիմաց կատարված ծախսերը 2020 թ.-ին կազմել են 3,081 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարվա տարեկան ցուցանիշի համեմատ աճելով 20.8%-ով, իսկ տեսակարար կշիռը տոկոսային ծախսերում կազմել է 33.6%, ինչը օրինաչափ է պորտֆելների աճի պայմաններում:

Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց կատարված տոկոսային ծախսերը կազմել են 808 մլն ՀՀ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշից 0.6%-ով պակաս է:

2020 թվականին Բանկի կողմից ստացված զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտները կազմել են մոտ 8,391 մլն ՀՀ դրամ՝ 2019թ. համեմատ աճելով 1,460 մլն ՀՀ դրամով կամ 21.1%-ով:


Բանկի 2020թ.-ի գործունեության արդյունքում զուտ տոկոսային մարժան կազմել է 3.6%՝ նախորդ տարվա 3.1%-ի դիմաց:

Տոկոսային ծախսերի կառուցվածքը,
31.12.2020



- Հաճախորդների ժամկետային ավանդների և ընթացիկ հաշիվների դիմաց
- Բանկի կողմից թողարկված արժեթղթերի դիմաց
- Բանկերից և այլ ֆին. կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց
- Ռեպո պայմանագրերի դիմաց
- Ստորադաս փոխառության դիմաց
- Այլ

Տոկոսային ծախսերի կառուցվածքը,
31.12.2019



Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են մոտ 1,786 մլն ՀՀ դրամ՝ 2019թ.-ի համեմատ նվազելով 10.6%-ով կամ մոտ 212.5 մլն ՀՀ դրամով:


Հաշվետու տարվա ընթացքում կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսերը կազմել են 795.7 մլն ՀՀ դրամ՝ 2019թ.-ի համեմատ նվազելով 0.6%-ով կամ 4.7 մլն ՀՀ դրամով:

2020 թվականին Բանկի կողմից ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտները կազմել են 990.3 մլն ՀՀ դրամ՝ պակաս լինելով 2019թ.-ի համապատասխան ցուցանիշից 207.8 մլն ՀՀ դրամով կամ 17.3%-ով: 2019թ.-ի համեմատ նվազել են հիմնականում ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով իրականացված փոխանցումներից գանձվող միջնորդավճարները՝ պայմանավորված մեքենաների ներմուծման կրճատմամբ, ինչպես նաև երկրի տնտեսական, ռազմական և համավարակային իրավիճակներով:


2020թ.-ի ընթացքում Բանկը արտարժութային գործառնություններից գեներացրել է 1,085 մլն ՀՀ դրամի զուտ եկամուտ:

Բանկի ընդհանուր վարչական ծախսերը կազմել են 7,048 մլն ՀՀ դրամ՝ 2019թ.-ի 6,513 մլն ՀՀ դրամի դիմաց: Նախորդ տարվա համեմատ ցուցանիշի 8.2% տարբերությունը պայմանավորված է հիմնականում անձնակազմի գծով ծախսերի աճով: Վարչական ծախսերի աճը մասամբ նաև պայմանավորված է 2020թ.-ին մեկնարկած Բանկի վերաբրենդավորման հետ կապված ծախսերով:

Չնայած հաշվետու տարում առկա մի շարք խնդիրներին՝ Բանկին հաջողվեց տարին ամփոփել զուտ շահույթի 1,341 մլն ՀՀ դրամ ցուցանիշով:



Ստորև բերված են Բանկի գործունեության շահութաբերության ցուցանիշները:



Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի ցուցանիշը (EPS) կազմել է 761.4 ՀՀ դրամ:

Որպես ներդրումային բանկային ծառայությունների մատուցման առաջատարներից, Բանկը 2020թ.-ին ևս ուշադրության կենտրոնում պահեց այս ոլորտը և ձեռնարկեց բոլոր քայլերը՝ մատուցվող ծառայությունների (պահառություն, բրոքերիջ, տեղաբաշխում, խորհրդատվություն) որակը բարելավելու նպատակով: Ստորև բերված են այս ուղղությամբ իրականացված միջոցառումները.

- Վարչության գործունեությունը բնութագրող կանոնակարգի կազմում և հաստատում,
- «Մեկ պատուհանի» սկզբունքով հաճախորդների սպասարկում (պետական և կորպորատիվ պարտատոմսերով սպասարկման կենտրոնացում ինչպես գործառնական (պահառություն), այնպես էլ գործառնությունների իրականացման (բրոքերիջ) դեպքում),
- Հաճախորդի նկատմամբ ֆիդուցիար պարտականությունների կատարում (բանկ/հաճախորդ շահերի բախման կարգավորում. դիվեր/բրոքեր գործառույթների տարանջատում, դիվեր/բրոքեր հաշվապահական հաշիվների տարանջատում),
- Համապատասխան որակավորում ունեցող անհրաժեշտ քանակի աշխատակիցների ապահովում,
- Բրոքերային ծառայությունների մատուցման մասին գործող ընթացակարգի, պայմանագրերի և համաձայնագրերի վերանայում,

- Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի հաշվի օպերատորի կողմից մատուցված ծառայությունների սակագների վերանայում. սակագների տարանջատում ըստ բանկի հաշվետերերի և ոչ հաշվետերերի՝ բանկի հաշվետերերի նկատմամբ կիրառելով ավելի մեղմ քաղաքականություն, մինչդեռ ոչ հաշվետերերի նկատմամբ պահպանելով «լավագույն սակագնի կրառման» սկզբունքը,
- Ռեեստրավարման և պահառության արդյունավետությունը բարձրացնող ծրագրի մշակում և վերջինիս գործարկման աշխատանքների ձեռնարկում (բանկի բոլոր մասնաճյուղերի համապատասխան աշխատողների կրթում, որակավորման ապահովման, ինչպես նաև տվյալ ծառայությունների անխափան մատուցման համար անհրաժեշտ միջացառումների նախաձեռնում, համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ վերոգրյալ ծառայությունների խթանման շրջանակում անհրաժեշտ ծրագրի կազմում և մարքեթինգային արշավի ձեռնարկում),
- Հաճախորդներին տրամադրվող «AraratBank TRADING PLATFORM» միջազգային առևտրային հարթակի գործարկման անհրաժեշտության հիմնավորման և արդյունավետության բարձրացման ծրագրի մշակում և վերջինիս գործարկման աշխատանքների ձեռնարկում,
- Առևտրային հարթակի գործարկման հետևանքով հաճախորդների կողմից իրականացված գործառնությունները Բանկում գործարկվող հաճախորդների կառավարման համակարգ (ՀԾ) ավտոմատ մուտքագրմանն ուղղված աշխատանքների նախաձեռնում:



Թվային բանկինգը Բանկի գործունեության հիմնական ռազմավարական ուղղություններից է, որը շարունակել է զարգանալ նաև 2020թ.-ին: «ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ» բջջային հավելվածի զարգացումը հատկապես ուշադրության կենտրոնում էր: Այս ուղղությամբ իրականացված միջոցառումներն ու ձեռք բերված հաջողությունները ներկայացված են ստորև:

- Թվային բանկ համակարգի շարունակական թեստավորում և առկա թերությունների վերհանում և շտկում,
- Բջջային հավելվածի հասանելիություն անգլերեն և ռուսերեն լեզուներով,
- Պետական և կորպորատիվ արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվություն արտահանելու հնարավորություն,
- Իրականացվող գործարքների թույլատրելի սահմանաչափերի ավելացում,
- Իրականացվող փոխանցումների առավել հարմար ու ֆունկցիոնալ հնարավորությունների ներդրում,
- Գործող հաճախորդների կողմից հավելվածի միջոցով նոր հաշվի անվճար բացման հնարավորություն,
- ԱՊՊԱ պայմանագրի կնքում և վճարման իրականացում,
- «Earlyone» հերթագրման համակարգին ինտեգրում՝ հերթագրման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով,
- Հավելվածում հնարավորությունների ավելացում և վարկային արձակուրդից օգտված վարկառուների հետ հարաբերությունները առավել հարմարավետ կազմակերպելու նպատակով՝ համապատասխան ադապտացիոն գործընթացների իրականացում,

- «Հայտեր» բաժնում «Տեղեկանքի տրամադրում» դաշտի ավելացում, որը հնարավորություն է տալիս դեսպանատներ կամ ըստ պահանջի այլ տեղեկանքներ ներկայացնելու նպատակով հայտեր ուղարկել և ստանալ, համապատասխան մասնաճյուղից նախընտրելի ամսաթվին, օնլայն վճարման եղանակով,
 - Հավելվածի միջոցով ավանդ ներդնելիս տոկոսագումարի հաշվեգրման պարբերականության ընտրություն (ամսական, եռամսյակային, ժամկետի վերջում), ինչպես նաև «Ավանդի խզման հայտ» դաշտի ավելացում, որը հնարավորություն է տալիս վաղաժամ խզել պայմանագիրը,
 - Վերաբրենդավորմամբ պայմանավորված՝ App Store և Play Market հարթակներում հավելվածի թարմացում,
 - «Հայաստան» համահայկական հիմնադրամի և «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի հաշվեհամարներին արագ փոխանցումներ իրականացնելու հնարավորության ներդրում, հաճախորդների 20,000 հոգանոց բազայի ձևավորում:
- Վերոշարադրյալին զուգահեռ, Բանկը հաշվետու ժամանակահատվածում համագործակցություն է սկսել նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ծրագրավորման ընկերություններից մեկի հետ, որը պարտավորվել է պատրաստել և Բանկին տրամադրել համապատասխան ծրագրային կոդեր՝ կապված «back-end» հիմնական հարթակի, մոբայլ բանկինգ համակարգի ադմինիստրատիվ մոդուլի, ադապտացված և ներդրված համակարգերի փոփոխությունների ու լրացումների իրականացման և այլ գործառնությունների հետ:

Հաճախորդների բարձրակարգ սպասարկումը Բանկի առաջնային նպատակներից է, իսկ սպասարկման հետ կապված ցանկացած խնդրի վերհանումն ու լուծումը համարվում է առաջնահերթ: Այս համատեքստում Բանկը սպասարկող անձնակազմին դիտարկում է որպես բանկ-հաճախորդ համակարգի կարևորագույն ներկայացուցիչ, ինչպես նաև բանկային ծառայությունների վաճառք իրականացնող առաջնային օղակ: Ուստի սպասարկող անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունն ու հաճախորդների հետ հաղորդակցվելու և վաճառքը արագ ու գրագետ իրականացնելու հմտությունները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում:

Հաշվետու տարում Բանկը մեկնարկեց իր վերաբրենդավորման գործընթացը, որին զուգահեռ փորձում է նաև նորովի ձևակերպել Բանկի հիմնարար արժեքները, որոնք կհանդիսանան հիմնասյուներ նոր կորպորատիվ մշակույթի ձևավորման համար: Նոր կորպորատիվ մշակույթի ձևավորումն ու Բանկի սպասարկող անձնակազմին դրա մատուցումը կդառնա կարևորագույն հանգամանք, որը կնպաստի հաճախորդների նկատմամբ մոտեցումների փոփոխությանը՝ հաճախորդակենտրոն սկզբունքների ձևավորմանը և նրանց բավարարվածության ու լոյալության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը:

Կարևորելով անձնակազմի պրոֆեսիոնալիզմը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը և համալիր ծառայությունների մատուցումը՝ Բանկը շարունակաբար իրականացնում է համապատասխան քայլեր հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգի զարգացման ուղղությամբ:

Հաճախորդների բարձրակարգ սպասարկումը Բանկի առաջնային նպատակներից է, իսկ սպասարկման հետ կապված ցանկացած խնդրի վերհանումն ու լուծումը համարվում է առաջնահերթ: Այս համատեքստում Բանկը սպասարկող անձնակազմին դիտարկում է որպես բանկ-հաճախորդ համակարգի կարևորագույն ներկայացուցիչ, ինչպես նաև բանկային ծառայությունների վաճառք իրականացնող առաջնային օղակ: Ուստի սպասարկող անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունն ու հաճախորդների հետ հաղորդակցվելու և վաճառքը արագ ու գրագետ իրականացնելու հմտությունները մշտապես գտնվում են ուշադրության կենտրոնում:


Հաշվետու տարում Բանկը մեկնարկեց իր վերաբրենդավորման գործընթացը, որին զուգահեռ փորձում է նաև նորովի ձևակերպել Բանկի հիմնարար արժեքները, որոնք կհանդիսանան հիմնասյուներ նոր կորպորատիվ մշակույթի ձևավորման համար: Նոր կորպորատիվ մշակույթի ձևավորումն ու Բանկի սպասարկող անձնակազմին դրա մատուցումը կդառնա կարևորագույն հանգամանք, որը կնպաստի հաճախորդների նկատմամբ մոտեցումների փոփոխությանը՝ հաճախորդակենտրոն սկզբունքների ձևավորմանը և նրանց բավարարվածության ու լոյալության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը:

Կարևորելով անձնակազմի պրոֆեսիոնալիզմը, հաճախորդների սպասարկման որակի բարձրացումը և համալիր ծառայությունների մատուցումը՝ Բանկը շարունակաբար իրականացնում է համապատասխան քայլեր հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման (CRM) համակարգի զարգացման ուղղությամբ:

Այս հանգամանքը կարևորվում է նաև՝ ելնելով ռազմավարության հիմքում դրված ինտենսիվ աճի և հաճախորդներին խաչաձև վաճառքներ իրականացնելու սկզբունքից:

Հաշվետու տարին, որը լի էր մարտահրավերներով ու խնդիրներով, լավագույնս ի ցույց դրեց հաճախորդների հավատարմության մակարդակը: Ուրախությամբ պետք է փաստել, որ, չնայած խորը խնդիրների ու ահագնացող բացասական սպասումների և տրամադրությունների, Բանկի հաճախորդների թիվը ավելացավ 8.9%-ով, իսկ նրանցից ներգրավված միջոցների կայունության պահպանումը Բանկի բարի համբավի ու բարձր վստահության լավագույն ցուցիչն էր: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա ընթացքում անկախիկ օնլայն գործարքների քանակի ավելացումը եկավ փաստելու նաև ԱՐԱՐԱՏՄՈՒԲԱՅԼ բջջային հավելվածի արդյունավետությունը:

Սուր մրցակցային և ռազմական-համաճարակային պայմաններում 2020թ.-ին Բանկը պահպանել է իր հաճախորդների կայուն բազան և 2019թ.-ի համեմատ ավելացրել նաև ֆիզիկական անձանց տեսակարար կշիռը:



Ներքին հսկողական համակարգը Բանկի զարգացման ռազմավարական նպատակների իրագործման և կառավարման հիմնական տարրերից է:

Ներքին հսկողական համակարգն ուղղված է բարելավելու և զարգացնելու Բանկի գործունեության արդյունավետությունը, աջակցելու Բանկին հասնելու իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

Բանկում ներդրվել և շարունակաբար կատարելագործվում է միջազգային լավագույն փորձին համապատասխան ներքին հսկողության համակարգը, ինչպես նաև ռիսկերի գնահատման հիման վրա Բանկի ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման, ստուգումների իրականացման և հետստուգումային հսկողության գործառույթը:

Ներքին աուդիտի մասնագիտական գործունեության միջազգային ստանդարտներին ու վարվելակերպի կանոններին համապատասխան Բանկում ներդրված Ներքին աուդիտի գործառույթն ապահովում է անկախ և անկողմնակալ հավաստման գործունեության իրականացում՝ ուղղված Բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Այդ նպատակով Ներքին աուդիտի վարչության կողմից վերանայվել են մոտեցումները աշխատանքային ծրագրի կազմման գործընթացում՝ հիմնականում ստուգումների իրականացման շեշտը դնելով Բանկի ինչպես տարածքային, այնպես էլ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության գնահատման և ռիսկերի բացահայտման վրա: Ստուգումների և գնահատումների արդյունքները նպաստել են նաև բացահայտված խնդիրների վերացման նպատակով ուղղիչ և կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը՝ ուղղված Բանկի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի ու գործընթացների արդյունավետության բարձրացմանը:

Ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը բարձրացնելու, ինչպես նաև համապատասխանության ապահովման գործընթացն ապահովելու նպատակով՝ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ նոր կառուցվածքով սահմանվել է համապատասխանության ապահովման խումբ, որն օժանդակում է գործարար գործընթացների իրականացումն օրենսդրության, նորմատիվ և ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան, ինչպես նաև նպաստում է համապատասխանության և կորպորատիվ մշակույթի պահպանմանը:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ում արդյունավետ համագործակցում են հսկողական գործառույթի՝ Ներքին աուդիտի, Ռիսկերի կառավարման և Համապատասխանության ապահովման համակարգերը՝ համաձայն ՀՀ ԿԲ իրավական ակտերի պահանջների, որոնք ուղղված են բարձրացնելու ընթացիկ գործունեության նկատմամբ հսկողությունը, գնահատելու և նվազեցնելու հնարավոր ռիսկերը:

Ներքին իրավական ակտերը ուսումնասիրվում են ըստ առանձին գործառնությունների՝ ՀՀ օրենքների և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի համապատասխանության տեսանկյունից, ինչպես նաև տրվում են գործընթացների օպտիմալացման վերաբերյալ առաջարկություններ:

Վերջին ժամանակներում Բանկը առերեսվեց թե՛ արտաքին միջավայրից եկող, թե՛ ՀՀ տնտեսությունում և բանկային համակարգում առկա բազում մարտահրավերների: Բանկին հաջողվեց դիմակայել համաճարակի և պատերազմի հետևանքով առաջացած բոլոր ռիսկերին: Չնայած նրան, որ ռիսկերը ակնհայտորեն մեծ էին գործունեության գրեթե բոլոր ուղղություններում, Բանկը ապացուցեց, որ ունակ է դիմակայելու ծանր սթրեսային իրավիճակներին բնորոշ ռիսկերին: Բարձր իրացվելիության պահպանման նպատակով Բանկը կշարունակի օգտագործել իր հնարավորությունները միջազգային ֆինանսական կազմակերպություններից երկարաժամկետ ու ցածր ծախսատարություն ունեցող միջոցների ներգրավման ուղղությամբ: Միաժամանակ արտաքին աղբյուրներից ներգրավվող միջոցների հնարավոր թանկացման կամ ներգրավման դժվարացման դեպքում իրացվելիության ռիսկի զսպման նպատակով Բանկը պլանավորում է հավասարակշռել ներգրավված միջոցների պորտֆելը տեղական շուկայից ներգրավվող ժամկետային միջոցների կշռի բարձրացմամբ՝ ապահովելով պորտֆելի դիվերսիֆիկացիան: Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով, հաշվի առնելով տնտեսական բացասական զարգացումները և վարկային պորտֆելի որակի վատթարացման հետ կապված սպասումները, Բանկը կշարունակի վարել զգուշավոր վարկային քաղաքականություն՝ միաժամանակ ուշադրության կենտրոնում պահելով գործող վարկային պորտֆելում առկա զգայուն վարկերը և ակտիվ միջոցներ ձեռնարկելով խոցելի ոլորտներին տրամադրված վարկերի վերադարձման ուղղությամբ:

Գործառնական ռիսկերի կառավարման գործընթացի շրջանակներում, հաշվի առնելով աշխատանքի կազմակերպման նոր իրողություններն ու պահանջները, Բանկը կշարունակի աշխատանքի հեռավար կազմակերպման գործընթացի արդյունավետության ու անվտանգության բարձրացման ուղղությամբ իր աշխատանքները: Միաժամանակ, ստեղծված իրավիճակը կարևորում է նաև հաճախորդների հեռավար սպասարկումը և օրակարգային դարձնում Բանկի ծառայությունների թվայնացումն՝ ուշադրության կենտրոնում պահելով գործարքների անվտանգ իրականացումն ու հնարավոր ռիսկերը:

Շուկայական ռիսկերի գծով ցածր ռիսկայնությունը պահպանելու նպատակով՝ Բանկը վարել է արտարժութային դիրքի այնպիսի քաղաքականություն, որն ապահովել է Բանկի եկամուտների և ռիսկերի հավասարակշռված ու օպտիմալ մակարդակ: Բանկը շարունակել է գործել՝ համաձայն ներգրավված ու տեղաբաշխված միջոցների բալանսավորված կառուցվածքի քաղաքականության՝ ըստ ժամկետների և տոկոսադրույքների:

Բանկի գործող ռիսկի ախորժակով սահմանված է Ռիսկերի կառավարման եռաստիճան համակարգ, որով սահմանված են յուրաքանչյուր սահմանաչափի շեղման դեպքում պատասխանատուների շրջանակը և իրականացվող միջոցառումները: Նման բուժքերների սահմանման արդյունքում հնարավորություն է ստեղծված ռիսկերը արձանագրել և կառավարել տարբեր մակարդակներում՝ շահագրգիռ ստորաբաժանումներից ընդհուպ մինչև Բանկի խորհուրդ:

Բանկի ռիսկի ախտորոշակով և ռիսկի ախտորոշակի ներքո սահմանված գործիքներով ձևավորված է Ռիսկերի կառավարման ընդհանուր և ըստ առանձին ռիսկերի միասնական կառավարման համակարգ:

Բանկի ռիսկի ախտորոշակով սահմանված առաջին մակարդակի ցուցանիշներով սահմանված է Բանկի նպատակային ռիսկի պրոֆիլը, որն իրենից ներկայացնում է ներքին սահմանաչափերի համակարգ, որն, իր հերթին, հնարավորություն է ընձեռում սկզբնական փուլում հսկողություն իրականացնել Բանկի ռիսկի ախտորոշակի պահպանման նկատմամբ՝ միաժամանակ չխոչընդոտելով Բանկի գործունեության բնականոն ընթացքին և ակտիվների արդյունավետ կառավարմանը:

Բանկի գործող ռիսկի ախտորոշակը իր մեջ ներառում է հետևյալ հիմնական ուղենիշները՝

1. Բանկի կողմից ընդունված ռիսկի մեծությունը չպետք է հասնի այնպիսի մակարդակի, որ հանգեցնի Բանկի գործունեության դադարեցմանը՝ այդ թվում, շուկային իրավիճակներում:
2. Անկանխատեսելի կորուստների դեպքում Բանկի կապիտալի մեծությունը պետք է բավարարի Բանկի վարկատու գործընկերների պահանջները:
3. Բանկի կողմից իրականացվող գործառնությունների դեպքում դրամական հոսքերի կառուցվածքը և իրացվելիության բուֆերները պետք է երաշխավորեն հաճախորդների նկատմամբ պարտավորությունների ժամանակին կատարումը՝ երկարաժամկետ և կարճաժամկետ հատվածներում: Այդ նպատակով Բանկը սահմանել է իրացվելիության գծով մի շարք ցուցանիշներ, որոնք պարբերաբար վերահսկվում են օրական, ամսական և եռամսյակային կտրվածքով:

4. Բանկի ակտիվների և պարտավորությունների գործող կառուցվածքը ապահովում է Բանկի կողմից ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և համապատասխանում է Բանկի բիզնես-մոդելին:
 5. Իր գործունեության ընթացքում Բանկը ձգտում է խուսափել կենտրոնացումներից՝ սահմանելով կենտրոնացումների թույլատրելի սահմանաչափեր:
 6. Բանկը վարկային պորտֆելի կառավարման նպատակով սահմանել է վարկային պորտֆելի ռիսկի զսպման մի շարք ցուցանիշներ՝ հաշվի առնելով Բանկի վարկային ռիսկի պրոֆիլը, ռազմավարությունը և շուկայում ակնկալվող փոփոխությունները:
 7. Բանկն ապահովում է կայուն զարգացում և արդյունավետ գործունեություն երկարաժամկետ հորիզոնում:
 8. Բանկը պատշաճ կերպով ապահովում է ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջները:
 9. Իր գործունեության ընթացքում պահպանում է բարի համբավ՝ խուսափելով այնպիսի գործողություններից, որոնք կվնասեն իր գործարար համբավին:
- Ռիսկերի կառավարման գործընթացներն իրականացվում են Բանկի Խորհրդի կողմից հաստատված ռիսկի ախորժակի քաղաքականությանը համաձայն և մշտապես գտնվում են Բանկի ուշադրության կենտրոնում: Բանկում մշտապես ուսումնասիրվում և կիրառվում է միջազգային փորձը՝ բարձրացնելով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունը՝ նպատակ ունենալով ապահովել ռիսկ-եկամուտ օպտիմալ մակարդակը և նվազագույնի հասցնել բոլոր ռիսկերը:

The background features a dark, blurred image of financial charts. A line graph at the top shows a fluctuating trend with a peak labeled '245.57'. Below it, a bar chart is visible. The Ararat Bank logo, consisting of two orange triangles followed by the text 'AraratBank', is centered in the middle of the image.

AraratBank

բաղձրանում ենք միասին